



THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ՔԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՏԱՐԻ, ԹԻՒ 15

ՆԻՒ ԵՈՐԲ, ՓԵՏՐՎԱՐ 19, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՊԻՇԸՓ ՍԱԹԸՐԻ ԵՒ ՉԱՐԸ

Քաղաքիս Քաղվարի եկեղեցւոյ նախկին քարոզիչը՝ Ուաշինկիթընի այժմեան եպիսկոպոս Պիշըփ Սաթըրընը, անցեալ կիրակի օր, ինչպէս որ ծանուցած էինք կանխաւ, յիշեալ եկեղեցւոյ Մատարան մէջ 500ի շափ հարգութեան ու Նորին Վեհափառութեան հետ ունեցած անսակցութեան վրայ:

Հայտնի է եպիսկոպոսը խօսեցաւ իբր կէս ժամ. նրա խօսքն ընդհանրապէս ու քարոզչին խօսելու բարձր տաղանդը խոր սպառնութիւն ձգեցին իւր Հայ ունկնդրաց վրայ:

Նորին Գերապատուութիւնն ըստ ի մէջ այլոց.

«Ստուտնի կոտորածներէն յետոյ, Քաղվարի եկեղեցւոյ մէջ հոգեհանգրտան պաշտօններ ու շատ մը ժողովներ ըրինք՝ մեր համակրանքը արտայայտելու համար հարստահարեալ Հայոց: Բայց ժողովուրդը կ'ուզէր աւելին ընել. Անգղիոյ Մայր եկեղեցիէն խնդրուեցաւ այս մասին նախաձեռնարկ ըլլալ: 1896 ին խնդրագիր մը պատրաստուեցաւ, որ կը կըրէր 40 միլիոն ժողովուրդի ստորագրութիւններ: Այս խնդրագիրն որ Չարին պաշտպանութիւնն կը խնդրէր Հայ ազգին վրայ, Ս. Փետրուարի տարի նոյն տարւոյ Յուլիան առաջին շարժումն: Հոն շատ մը դժուարութեանց հանդիպեցայ. արտաքին գործոց նախարարը չէր ուզեր որ Չարին ներկայանամ. բայց շնորհիւ բարեկամներու՝ բազմ ունեցայ ունկնդրութեան մը արժանանալ: Նորին Վեհափառութիւնն, Օգոստոսի մէջ, առանձին կառք մը զրկեց՝ զի պալատ տանելու համար: Չարն ու Չարեան շատ սիրով ընդունեցին զիս, ու մեծ ուշադրութեամբ մտիկ ըրին ըսածներուս: Նորին Վեհափառութիւնն չէր կրնար սակայն վստահանալ զիս թէ կարող պիտի ըլլար հանրագրութեան խնդիրը կատարել: Մեր տեսակցութիւնը տեւեց կէս ժամի շափ, և շատ սիրով էր ընդունելութիւնը: Երկու օր վերջ տեսակցութիւն մ'ունեցայ Չարեանային հետ, ըսի իրեն թէ, Բրիտանոսի անունով ճամբորդած էի Անոր հաւատարմութեան համար: «Մեք Մայրազոյն Արեւմտից Բրիտանոսներն, լսելով Սասնոյ կոտորածները՝ առաջին դարու հարստահարութիւններն վերադարձած նկատեցինք. վստահ ըլլալով թէ Ասիոյ այդ Բրիտանոսներն ալ մեր եղբայրներն էին, չէինք կրնար անտարբեր մնալ, ուստի որոշեցինք օգնութեան ձեռք կարկառել անոնց. գիտէինք թէ այս ընկեր միակ միջոցն էր, զիմեւ աշխարհի ամենէն հզօր կայսեր՝ Ռուսիոյ

Վեհ. Չարին, ու անոր պաշտպանութիւնն խնդրել անօգնական և արևմտադարի Հայաստանի վրայ»: — «Եթէ Եւրոպան միանայ, պատասխանեց Չարեան, ամէն ինչ ազէ կ'ըլլայ»: Եւ կը թուէր թէ այդ էր միակ խոչընդոտն, որ արգելք կ'ըլլար պաշտպանելու Հայերն փախաք ունեցող ազգաց»:

Պիշըփ Սաթըրընը Լոնտոն վերադարձած ատեն, կըստըստն հրատարակեց զինքն ի Հաւատքէն, ուր երկայն խօսակցութիւն մը ունեցած են Հայկական խնդրոց վրայ:

Գեր. Բարոզիչը պատմեց նաև թէ ինչպէս Օպամա շոգենաւով տարի մ'առաջ նիւ Եօրք եկող 150ի շափ Հայ գաղթականներն սղատակու պատճառ եղած էր:

Այս նորեկներն, ինչպէս գիտեն ընթերցողք, Գաղթային վարչութեան կողմէն ետ պիտի զրկուէին Քաղաքիս նաւահանգստէն: Սաղուէչըն Արմին շատ ջանքեր ըրաւ արգելելու համար վարչութեան այդ ձախող որոշումին գործադրութիւնն:

Այդ օրեր, ըստ Պիշըփ, թէ փնդարուրկէն Ռուսական իշխանէ մը մի Հեռագիր կ'ստանայ, որով իշխանը կը վստահանէ թէ այդ դաղթականներ երկրին բնա չը պիտի ըլլային, և թէ ինքն պատասխանատու կ'ըլլար անոնց համար: Պիշըփ Սաթըրընը այս հեռագիրն նախազանգ Բիլվըրնի կը տանի անմիջապէս և հետեւեալ օրը Հայերն ազատ կարճակուրիս:

Այդ Հայերու մի քանին ներկայ լինելով հոն, եպիսկոպոսին հրաւիրանօք ոտքի ելան ու ըսին թէ գոհ էին իրենց վիճակէն: Պիշըփը խոստացաւ նախկին նախազանգին խօսիլ Օպամաի Հայ գաղթականաց մասին. և վերջացուց իր քարոզը հետեւեալ խօսքերով.

«Ձեզ կրնար հասնալ թէ Աստուած ինչպէս թող կուտայ որ այս հարստահարութիւններն տեղի ունենան: Բայց անտարակոյս բարիք մը պիտի գայ այս չարիքներէն: Հայաստանէն աշխարհի համար մեծ օրհնութիւն մի պիտի ծնի: Ձեր և իմ պարտականութիւնն է այժմ աղօթել Ամենակազին որ շուտ զրկէ մեզ այդ օր:»

Պատասխանեք վերջ եպիսկոպոսըն ձեռք թոթուեց Հայերու հետ, որոցմէ շատեր համբուրեցին Նորին Սրբազնութեան ձեռքերն, Հայկական սովորութեան համեմատ:

ՆԱՒ ԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ
Այսօր գալիք
Քամբանիս, Լիվըրփուլէն
Վաղը գալիք
Քանբայնը Հալփէն

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՅրանքՓուրթըրը Չայիթ ուն կի կ'Պօլոյ թղթակիցը կը գրէ թէ Ռուսիայ, Գաղիայ և Անգլիայ համաձայնած են Յուդայական ծօրձ իշխանը կրէտէի կառավարիչ անուանելու, և եթէ պէտք ըլլայ, առանց Սուլթանի յօժարութեան: Միւս կողմէն, Աստորիայ և Գերմանիայ կը հակառակին այս որոշման. և այսպէս վերջ կը գտնէ Եւրոպայի տնտեսական համաձայնութիւնը: Սուլթանը թէսալիսի մէջ ունեցած զինուորները կը շատցնէ. Էտհէմ Փաշային 1,200,000 Ֆրք. զրկած է որպէս զի պատրաստութիւններ տեսնէ: Վերոյիշեալ երեք Տէրութիւնները իրենց միութեան առաջին ազդեցութիւնը ցոյց տալու համար, իրենց առաջին թարգմանները Պալատը զըրկած են, պահանջելու համար որ Օսմ. զին. ունեւրը թէսալիսի և Կրէտէն անմիջապէս ետ կանչուին. Սուլթանը մերժած է, և սկսած է իր բարեկամի՝ Գերման կայսր խրատները գործադրել: Կ'ակնկալուի որ Աստորիայ և Գերմանիա իրենց կրտսէ ունեցած մարտանունները ետ կանչեն: Իտալիա չուզեր երեակ նեղակազութեան միւս երկու անդամներուն հետեւիլ: Այս առթիւ ռուսական Ն օ Վ օ յ է Վրէմիա լրագիրը կըսէ թէ «Ռուս. Յրանք և Անգլիական նոր դաշնակցութեան ոյժը և հետեւութիւնը քիչ օրէն կը անանուի, և Պետլին ու Վիէննա իրենց բռնած անխտէմ ընթացքէն կը զըղջան»: Գէորգ իշխանը հրաման ստացած է պատրաստ գտնուիլ Կրետեցի թաւա համար: Ռուսիայ սպառնացած է որ եթէ Սուլթանը գրուի չի ծռէ, իւր մարտանունը կրտսէն ետ պիտի գայ, որպէսզի թոյլ չի տայ որ ասկէ վերջ Տաճիկը զօրք զրկէ հոն: Սա բացարձակապէս կը նշանակէ թէ Տէրութիւնները պիտի ձգեն որ կրետացիները հոն գտնուած Տաճիկական բանակը ոչնչացնելով, իրենք իրենց ուժով կը զլին տէրը ըլլան ու այսպէս ինչորը լուծեն»:

Պուլկարիայ ալ իր ձայնը կտրած չէ և կը պնդէ իր պահանջներուն վրայ: Մակէդոնիացիք ասկէ ոյժ առնելով, կը պատրաստուին ակտուարութեան: Երբեք զարեք իվեր ճընչուած ժողովրդական յոյսերը 98 ի գարնան արեւին բարերար ազդեցութեան տակ պիտի ծաղկին. կը մաղթենք որ այս ծաղիկները մեր ինչն նման Հիւսիսային Ռուսական հովը չը խամրեցնէ Սուլթանը հրաման զրկած է Էտհէմ Փաշային որ Ռուսքու պ երթայ ու հոն տեղի ունեցած խոզութեանց պատճառն գտնէ, և ժողովրդին վախ զայն ըսելով թէ Յոյներու վիճակին կը հասցունէ զիրենք եթէ տեղերնին չը նստին: * * *

Այս շարժումն կարեոր դէպքերէն մին էր Սպանիոյ Ռուսիակի թընի դեսպանին՝ Տի Փիւ Տը Լօմի հրաժարիլը: Բիւպայի ձիւնթան՝ սոյն անձնաւորութեան իւր բարեկամներէն մէկին գրած անհատական նամակը գողցած ու տեղւոյս լրագրաց մէջ հրատարակած էր: Սոյն նամակին մէջ սպանիական Գերմանացի ազատ կերպով իր կարծիքները կը յայտնէ և նախազանգ Մաք-Բիլնլիի համար կըսէ թէ «ցած դիւանագէտ» մ'է. ամէն ով որ աղէկ կերպով մը ամերիկական քաղաքականութիւնը քննէ, պիտի տեսնէ թէ յիշեալ գիտողութիւնը ճիշդ է: Սակայն ամերիկական «ձիւնթան» կառուցեց, և Տի Լօմ վեհանաձ կերպով գրածը չ'ուրացաւ ու հրաժարակամը տուաւ, և անցեալ օր մեկնեցաւ քաղաքէն: Չարմանայի գաղաղիպութեամբ մը հինգաբարթի առաւօտ, Հաւանայի առջև գտնուած Ամերիկական «Մէյն» զբոսաւորը պայթեցնցաւ ու կործանեցաւ. նաւաստիներէն 200էն աւելի կորուած են: Փոքրացանքին պատճառը ինչ ըլլալը չի գիտցուիր: Սակայն այս դիպուածը Ամերիկական ծովային կարողութեան համար ինչ քան մը չաւանդներ: Գերմանիան ու չեքոզ արտաստուար ունեւալը ստակ շրենք. գանտք գործածելը գիտնալու է:

Երբ Չօլաի դատաստանին մասին կը կարդանք, մտքերնիս կուգայ Եօրէնհաւերի գրածը, «Եթէ Հրէայինը Աստուծոյ ընտրած ժողովուրդն են, Աստուած ալ Հրէայներու ընտրած Աստուածն է. իրար աղէկ գտեր են. ետ երկուքն ալ հետու կը կենամ:», Եթէ Չօլա ալ այսպէս մտածէր, հիմակ իբր յանցաւոր դատաստանը առջև չէր ելլեր. սակայն Չօլա այնպէս անձ մ'է որ ամեն բան կը գտնէ անուս վաս Չենք գիտեր թէ Հրէայները իրեն ինչ վճարեցին որ Տրէյֆուսը պաշտպանէ, սակայն սա գիտենք թէ իրեն մօտերս հրատարակելիք Փարիզ անուով գիրքը այս առթիւ գտնէ 100 000 հատ աւելի պիտի ծախուի: Գատաստանը մինչև հիմայ ուրիշ բան առաջ չը բերաւ, այլ Տրէյֆուսի յանցաւոր ըլլալը մի քանի մեծ թէնէնայներ հաստատեցին: Չօլա կը կարծուի որ պիտի դատապարտուի. ժողովրդի կարծիքն ու զգացումը իրեն հակառակ են: Գաղղիացիները իրեն զինուորականները և բանակը շատ կը սիրեն, և այս սէրը կոյրութեան կը հասնի: Եւ երբ մէկը զինուորականներու պատուոյն դպի, ինչպէս ըրաւ Չօլա իր նախազանգն գրած նամակին մէջ, այդ անձը Չօլա չէ այլ Բրիտանոս ալ ըլլայ (Շարունակութիւն 4րդ երես)



ՀԱՐԱՐԱԿՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱԳԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍԹ.	Տարեկան	10 Փրանք.
Վեցամսեայ	50	Բաժանորդագիրն ԿԱՆՈՒԿ Վճարելի է միշտ:	
Եռամսեայ	15		

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝ To the DICKRIS PUBLISHING Co., 628 Third Ave., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Matter.

Նիւ ԵՈՐԿ, ՀԱՐԱՐ, ՓԵՏՐՎԱՐ 19 1898.

Ո Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Բ

«ԱՆՈՒՇԻ ԿԱԳԵԼ» ԿԱՄ ՉԱՔԱՉԱՆՑ ՆԵՐՈՂԱՄՈՒԹԵԱՆ ՈՂԻՆ

Վէճ, կռիւ ու խռովութիւններ անուշի կապելու անպայման փախաբ մը կայ մեր մէջ, որ շատ անգամ փոխանակ օգուտի փնտրանք կ'արտադրէ: Ընկերիդ գլուխը պատռէ, կեղիքէ հայրենակիցդ կամ բրէ ինչ որ կուզես. օր մը վերջ—եթէ մանաւանդ խնդրը օրէնքի երթայ, ամէն կողմէ ազգայիններ կը ժողովուրդի անուշի կապելու համար: «Հայ ենք», բերտոտնեայ ենք. սխալ մ'է գործուցաւ, փնտրուինք. ստոնք են գորուտ փառանքն անուշի փաստարաններուն: Թող սակայն ներուի մեզ ըսել թէ այսպիսիք կը նմանին շատ անգամ այն վերաբոյժին որ վէրքի մը փտտած ու փնտրուող մասերն չի կտրտեր՝ հիւանդին ցաւ չի պատճառելու համար: Ներողամիտ ըլլան արդարեւ առաքինութիւն է. Սուրբ Գրքը հաշտարարին համար օրհնութիւններ պահած է. բայց մոռնալու չենք թէ Աւետարանի տառնի ու հոգւոյն հակառակ է ո'ւ կ'է կերպիւ եղծումն ու ոճիրը քաջակերել:

Յանցանքներ կան որոց ներքին առաքինութիւն է, բայց յանցանքներ ալ կան, որոց չի ներքին է առաքինութիւն: Վրէժխնդիր Աստուածն անգամ չի ներքին սիրո, որ աններքի յանցանքի ներքին կը յանդգնի: Ինչպէս որ ամեն բանի սահմանն ու չափը կայ, այնպէս ալ ներողամտութեան չափ մ'ըլլալու է: Մենք Հայերս շատ պարագաներու մէջ անպայման ու անսահման ներող ըլլալու ետեւ կը վազենք, և վազած ենք յանցելու մին, անանկ որ այս «անուշի կապելու» սովորութիւնն և անպայման ներողամտութեան ոգին մեր ազգային կեանքի մէջ մեծ աւերումներ գործած՝ ու կը գործեն տակաւին: «Հայ ենք, եղբայր ենք, ներենք մեր թշնամիին. մենք Բրիտանիայ ենք, մէկ երեսնիս աստակողին միւսն ալ դարձնենք, թող Աստուած յանցաւորին պատիժը տայ» և հետեւաբար «Տաճիկը հեթանոս է. սպէս է. ըրածը չի գիտեր. թէ և ջարդ ու կտոր ըրաւ մեզ, բայց մենք ներենք, թող Աստուած վրէժխնդիր ըլլայ»... Այս չէ՞ տրամարանութիւնը մեր անուշի փաստարաններուն...:

Սակայն գիտնալու ենք թէ ամէն յանցանքի ներքին, ամեն չարեաց համբերելն ու անպայման ներողամիտ ըլլալն, այս երկրազնտի վրայ, մարդս ստրկութեան կը տանի: Աւետարանն ալ չի ներքին այսպիսի ներողամտութեան: Մենք այս մասին չափազանցութեան հասած ենք: Հին կտակարանն ու անոր քարոզածներն միթէ գիտնալ ու գործադրելն ալ առաքինութիւն չէ՞:

Երբեմն միայն ներողութիւն, երբեմն «սկուայի սեղ աղուայ, աչքի սեղ աչք». բայց սակայն ներքին թող ըլլայ մեզ ըսել թէ, մեր վիճակ ունեցող ազգի մը համար շատ անգամ մէկ աչքի տեղ՝ երկու, մէկ սկուայի տեղ, բազում ատամներ...:

Ազգային ներքին գործոց մէջ անուշի կապելու սովորութիւնն կարծես աւելի խորունկ արմատ ձգած է մեր մէջ: Մեր ժողովրդի ձայնն ու վստահութեան քուէն չարաշար գործածող պաշտօնեայն ո՛չ միայն չի պատժուիր, գէթ բարոյապէս, այլ և շատ անգամ իր գործած եղծումն ու յանցանքը գաղտնի կը պահուին անուշի փաստարաններու ձեռքով: «Հայ ենք. եղբայր ենք. բան մըն էր եղաւ, գաղտնի պահենք. ամօթ է»: Սակայն մոռնալու չենք թէ Հայ ու եղբայր ըլլալը, մարդու մը իրաւունք չի տար իր ընկերոջ ու իր ազգին դէմ մեղանշելու: Եղծումը ո՛չ

Հայ է և ոչ եղբայր, ընկերականութեան որեւի՜թ թշնամին է այն: Ազգի մը դէմ մեղանշող անձը այնչափ թշնամի է ընկերականութեան, որչափ է այն՝ որ յանցաւորին սխալն քողարկել կ'աշխատի: Բնութիւնը իր օրինաց դէմ՝ մեղանշող մը ազատ չ'արձակեր ընաւ:

Հոն, ուր ազգային պաշտօններն անթուշակ են, այս անուշի եղծումն անհամեմատ յառաջացած է: Երբ ասանակաւ մը, գանձապետ մը կամ հոգաբարձու մը իր պաշտօնն արդարութեամբ չի կատարեր, ընդհանրապէս քիչեր կը համարձակին բողոքել, վստահ զի առաքինութիւն մը ճանչցուած է մեր մէջ, այս օրինակ պարագաներու տակ, յանցանքն սքողել, անուշի կապել զայն անհատուած փաստերով. և ինչու, — որովհետեւ «ամօթ է եղբեր». «ծօ՛ եղբայր, փարայ մը տուինք այս մարդուն. ձրի գործ մ'էր ըրաւ. կը վայելէ որ խայտառակներ զայն. եթէ այսպէս մեր պաշտօնեայններն վշտացնենք, օր մը թիկնածու մը չի պիտի կրնանք գտնել, պաշտօնի կանչելու համար»:

Հարկ չէ ըսել թերեւ թէ այս մեղմացուցիչ պարագաներն սխալ ու խեղճուկ փաստեր են միայն: Ո՛վ կրնայ թէ անթուշակ պաշտօն մը անվարձատրելի կը մնայ: Ազգին բարիք մը ընկելու կամ պարտականութիւն մը կատարած ըլլալու փառքն ու փառաբեր նիւթական վարձատրութենէ շատ աւելի բարձր նշանակութիւն ունենալու են մանաւանդ անոնց համար, որք անթուշակ պաշտօն մը կ'ուսանան: Եթէ ծարաւին զուտ մը պազ ջուր տալն իր վարձատրութիւնն ունի, ազգի մը ծառայելն ինչպէ՞ս առանց փոխարէնի կրնայ մնալ...: Ուստի իրենց ծառայութեան համար նիւթական հատուցում չ'ակնկալող պաշտօնեայն կրկին վարձատրութեանց աչք ունի՝ մեծագոյն վարձատրողէն. հետեւաբար եթէ կան մեր մէջ — ինչպէս որ կը հաւատանք — ընդհանրութեան օգտակար ըլլալու փառքն ունեցող մարդիկ, յանցաւորի մը պատժուելն ո՛չ թէ՛ անոնց վհատութիւն կը պատճառէ, այլ բարոյական մեծ դաս մը կ'ըլլայ ուղիղ ճամբայէն քալելով՝ պարտականութիւնին կատարել խղճի մտօք ու արդարութեամբ: Եթէ եղծում գործող պաշտօնեայն մատնանիչ չ'ըլլայ, արժանաւորն կարելի չէ գնահատել:

Եթէ սեւ չ'ըլլայ, ճերմակին վրայ անկարելի է գաղափար կազմել: Խաւարը եթէ փարատի բոլորովին, լոյսը կարելի չէ գնահատել: Անարժանք, յանցաւորը, թոյլն ու անտարբերը մատնանիչ ընկել և պատժելու ենք, որպէս զի եղծումներն պակասն ու ազգային գործոց ճամբան վրայէն խոչընդոտներ մեծաւ մասամբ անհետ ըլլան:

Ին՝ Չ է ՁԵՐ ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Խմբագրութիւնս, ինչպէս ըսուած է ուրիշ անգամ, աշխատած է ու պիտի աշխատուի այս լրագիրն կարելի եղածին չափ տարածել Հայոց մէջ, ու արձագանքն ըլլալ ժողովուրդի ձայնին. այս ընկելու համար, մենք պատրաստ ենք ընել ինչ որ մեր կարողութիւն կը տանի, և ըրած ենք ինչ որ կըրցած ենք ընել: Սակայն կը փափարինք մեր ընկերացուց կարծիքն ու թիւրաբարութիւններն իւր լալ այս մասին, յատուկ նպատակի համար: ՏԻԳՐԻՍը տեղական պահանջներուն պատասխանող թերթ մը ընկելու համար, ձեր կարծեօք, ի՞նչ պէտք է որ ընենք: Այս մասին մեզ գրուած նամակները ամենայն ուղադրութեամբ աչքէ պիտի անցունենք. գործադրելի և լաւագոյն թիւրաբարութիւն ընող նամակներն պիտի հրատարակենք, և պիտի անցունք օգտուելի ժողովրդեան ձայնէն, զի ձայն բազմաց ձայն Աստուծոյ է:

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Հետեւալ պատասխանը հրատարակելով, կը յուսամք որ շատերու պատասխանած կ'ըլլանք առանց մանաւոր նամակներ գրելու:

Գ. Բ.—Արդարեւ «մեր սիւները բաց են ժողովրդի առջև», բայց գիտնալու է թէ հայրութեան չի վերաբերող խնդիր մը, թերթի մը մէջ — գէթ մեր թերթին մէջ — մուտ չի գտներ: Թղթակցութիւններն համառօտելու, քերականական սխալներն ուղղելու կամ ընտրութիւններ ընելու իրաւունք ունինք, բայց ուրիշ գաղափարն չենք կրնար խեղաթիւրել: Խմբագրող թերթի սիւներուն վրայ հսկող անձն է. թէ և անոնք բաց են ժողովրդի առջև, բայց ամեն մարդու խելքի փշածը հոն սեղ չի կրնար գրանել: Եթէ անձնական խնդիրներու տեղի ալ ուզենք, ՏԻԳՐԻՍը Բարեկունք աւելի գէշ կը դառնայ: Խմբագրութիւնս ուրիշ գրածին պատասխանատու չէ: Հանրային գործ մը, անհատ մը, լրագիր մը կամ կուսակցութիւն մը ջառագործողին ու քննադատին հաւատար իրաւունք կուտանք՝ իրեն կարծիքն յայտնելու համար: Մենք վիճարանութենէ չենք խորշիւր. զի կը հաւատանք թէ գաղափարաց ընդհարումէն ճշմարտութիւնն երևան կեննէ: Մեր սիւներն բաց են այսպիսի վիճարանութեանց առջև, բայց երբ խնդիրն անձնականի երթայ, կամ ազատ ու ազնիւ ընդմիջութեան սահմանն անցնի, այդպիսեաց համար բաց են — փողոցները միայն:

ՈՐԲԵՐՈՒ ՍԻՆԱԿԸ ՏԻԿՆԱՆՑ ՆՈՐԱԿԱՉՄ ՈՐԲԱՆՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մի քանի խօսք:

Քաղաքակիրթ Ամերիկայում Հայ Տիկններն ու Օրիորդները առաջին անգամն է որ Ասիական թանձր քողը պատուելով հրատարակ են դուրս գալիս՝ մի ամենավսեմ, թէ և ծանր, բայց քաղցր գործ կատարելու. ուղղակի գործնապէս մարմնացում տալու իրանց կանանցի փափուկ իղձերին, միանգամայն օրինակ հանգիստնալով Ամերիկայի և ուրիշ երկիրներն բնակուած Հայ իգական սեռին:

Նիւ Եօրքում և Ամերիկայի այլ և այլ հայաշատ կեդրոններում անցնալները զանազան խոչոր տխուրոտներով, աղիկայոյց հարահարոցով շատ ընկերութիւններ են կազմուել և կէս ճանապարհի վերայ մեռել ու առանց դամբանականի թաղուել՝ մոռացութեան խորխորատի մէջ՝ չթողնելով իրանց ետեւը ոչ լաւ, ոչ վատ հետք: Մենք հրատարակ ենք հաւատարու, որ նիւ Եօրքի մեր Տիկններն և օրիորդներն նորակազմ «Որբախնամ Ընկերութիւնը» առաջինների կարգն անցնի, որովհետեւ իր օրինական հաստատու սկզբնաւորութիւնը՝ մեզ դեռու այն համոզման, թէ այս բարեկարգ ընկերութիւնը պիտի ունենայ իր գոյութիւնը, պիտի յարատեւ և ծառայէ իր որոշ, արդէն յայտնի նպատակին՝ պատասխանող Հայրենիքում շատ որբեր, որոնք կարօտում են ձեր մայրական գուրգուրանքին, փայփայանքին ու խնամքին յարգելի Տիկններն և Օրիորդներն:

Սակայն ցաւ է սիրտ պէտք է ստել, որ տակաւին մեղանում՝ Հայերս մէջ կան Ասիական հարեմական բնաւորութեան յատուկ՝ կծու պակասողականներ, որոնք յամուտութեան հակառակում են իգական սեռի ինքնուրոյն, անկախ գործունէութեան, աշխատում են յետ պահել նորանց հատարակական մի որեւէ շարժման մասնակցելուց, նորանց մարդկային ընկերական պարտականութիւնները կատարելուց, համարելով որ ներքին ստեղծում են որպէս անախի գարդարուն շարժական իր: Հայ իգական սեռը դարերով այս անխորհուրդ նախապաշարմունքին գերի է մնացել, բայց այլևս այս կաշկանդող շղթան գոյութիւն չունի քեզ համար Հայ կին, դու ապրում ես մի այնպիսի երկրում, ուր կինը գանուում է իր զոհ մասն բարձրութեան վերայ. ուր զո աչքի առջև կինը այր մարդու չափ կատարում է իւր քաղաքացիական պարտքերը, նպատուում է իր երկրի զարգացման անհատապէս և ընկերական միացնալ ոյժերով:

Նիւ Եօրքի Հայ Տիկններ և Օրիորդներ, դուք արդէն քաղաքակիրթ աշխարհի օրինակին հետեւելով՝ կամաւորապէս ստանձնել էք այս քաղցր պարտականութիւնը. ձեզ չի պակասում ոչ բարոյական, ոչ մտաւորական և ոչ նիւթական ոյժ. դուք՝ ձեր սկզբնական քայլերում, ըստ կանոնադրի, ձեր օրինական ընտրութիւնների ժամանակ ապացուցիք, որ օժտուած էք ամեն բարեմասնութիւններով, և միանգամայն փայլուն կերպով ապացուցիք՝ թէ որքան բարձր էք կանգնած (դա ձեր եւ մեր պարծանքն է) Ձեր օրինական ընտրութեամբ «Բարեգործական Ընկերութեան» յոյս, ուր գեղճուցներն ու կամայականութիւնները շարունակ թագաւորեցին նորա դիւանի ընտրութեան միջոցին:

Վերապէս դուք շատ լաւ յիշած կ'ընդհար երիտասարդ վարդապետի ճառի գեղեցիկ բովանդակութիւնը՝

որբերի սրտամկրի նկարագրութիւնը եւ Հայ կնոջ դերն ու պարտականութիւնը նորանց վերաբերմամբ. նաեւ ի միջի այլոց յիշել եւ այն պարագան, որ «Թերեւս» գտնուին մարդիկ, որոնք բանրասն ձեզ ու ձեր գործը, բայց գիտցէ՛ք Համբերել, գիտցէ՛ք ստանալ սրբաութեամբ ձեր գործը յատուցանել, ճանաչելով Ձեր գործի մեծութիւնն ու ձեր պարտականութեան վեհութիւնը, մանաւանդ Ձեր օրինակը պատճառ պիտի լինի Ձեր սեռակից քոյրերին միանալու, եւ ձեզ Հեա այս սարսափելի թշուառութեան առաջն առնելու»:

Ն. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ԲՈՆԵՐՈՂ, Ն. Հ. Փետրով. 9. Խմբագիր ՏԻԳՐԻՍԻ

Բաղաձր 26 անձէ բաղկացեալ գաղութն, մէջը հաշուելով 3 կին եւ 3 աղջիկ, ունեցաւ իր սրբախնամ մի խմբակ, 11անձերէ բաղկացած: Անցեալ Յունվար 30ի կիրակին տեղւոյն բուր Հայերս մի ժողով ունեցանք, (միջանի հոգի բացակայ էին ցրտի պատճառով):

Մասնաւոր նպատակ ունենալով որբոց խնդիրը, շատերս խօսեցանք այդ առթիւ թէ՛ պէտք է շուտով մի նպաստ հասցունել անդ, ըստ կարեւոր: Հանգանակութիւն բացուեցաւ, ամեն մասնակցեցանք, եւ յետոյ անմիջապէս շարժական գրեւորներ եղան. կազմուեցաւ որբախնամ խումբակը: Յիշեալ հանգանակութեան գումարը եղաւ § 36.75 եւ 23.25 ալ արդէն գոյութիւն ունեցողն ազգասաց գանձէն, եղաւ բոլորը վաթսուն տոլար, որ յանձնուեցաւ խումբակին: Միւս օր մեր Ամերիկացի գործաւոր ընկերներէն Հանգանակցեցինք § 10.10, եւ երեք տոլար ալ Հայ անցորդ մը նուիրեց. այժմ բոլոր եղած դրամն է եօթանասուն երեք տոլար եւ տասը սէնթ, որ ժողովուրդի փափաքանաց համեմատ եւ խմբակի Փետր. 6 նիստի որոշումով պիտի զրկենք 4 Պոլիս, Ս. Պատրիարքին, կարելի եղածին շափ շուտով: Ան այժմ մեր խմբակը կը բաղկանայ տասն եւ մէկ անդամէ, անդամոց մին երեք տարեկան մի աղջիկ է. թող դաս առնեն անոր հասակակից եղող եղբայրները եւ քոյրերը: Նաեւ արժանի է յիշել մի երիտասարդ, որ շարժական յիսուն սէնթ պիտի վճարէ մինչեւ վեց ամիս:

Եւ կը յուսանք թէ միւս գեւ չի գրուի մեր ընկերներն ալ ուրախութեամբ պիտի միանան խմբակին, որովհետեւ իրենք ալ մեծ ուժ տուին եւ կուտան աս բարի գործը հիմնուելուն:

ՈՐԲԱՆՆԱՍ ԽՄԲԱԿ

— Խարբերի Սորոսը գիւղի ազգայինք՝ ի Փրօվիտէնս, իրենց Ուսումնասիրաց Ընկերութեան ունեցած դրամադրութեն քառասուն տոլար յանձնեցին շարժուս մէջ §. Վաղի-նակ Վարդապետին, զրկելու համար ի Խարբեր Հաստատեալ Ազգ. Որբանոցին: Սոքա փափաք ունին նաեւ այս օրեր քանի եօթնական կազմել որբերու համար:

— Պ. Ղ. Բուզոսան մօտերն կը կազմէ Որբախնամ եօթնեակ մը, Ըստամփօրտի մէջ:

— Փրօվիտէնսէն Փետրով. 15 թիւ նամակաւ կը գրեն թէ ամսոյ 13ի կիրակի երկուցին տեղւոյն Ազգ. ընդհանուր ժողովին մէջ որբոց համար եղած Հանգանակութենէ գոյացած է երեք հարիւր եօթանասուն եւ եօթը տոլար, եւ որ շարունակելի է գեւ:

«Ապրիլ» Փրօվիտէնսի Հայերը, որ հարկ եղած միջոցին, կը յաւելու մեր թղթակիցը, գիտն ըստ արժանւոյն կատարել իրենց մարդկային եւ ազգային պարտականութիւնը»

«Սոյն ժողովոյն մէջ գրաւոր ճառեր կարդացին 8-10 տարեկան Բաղուցի երկու մանկիկ դասարաններ, իրենց տարիքէն անհամեմատ բարձր զգացմամբ: Այս ճառեր՝ ըլլալով միանգամայն իրենց մտքի եւ գրչի արտագրութիւնը, ամենուն համակրանքը վայելեցին:

«Նաեւ Տիկին Ա. Սարկաւագեան, որ իւր ստացած կրթութեամբ եւ գիտութեամբ մասնաւոր տեղ մը կը զբոսաւ գաղթ. Հայ Տիկնանց դասուն մէջ, կարդաց մի գրաւոր ազգեցիկ ճառ, արժանանալով ներկայից շնորհակալութեան եւ պատուոյն:

ՊՕՄԻՆԻ ՏԱԳՆԱՊԸ

Երէկ Արժ. Խաչ Վարդապետի ծխախոտները երեքի դէմ չորս քուէով որոշեցին որ Վարդապետը շարունակէ իւր Հովուական պաշտօնը: Այս կերպով վերջ կը գտնայ Պօսթոնի սազնապն գէթ առ ժամանակեայ կերպով: Սակայն սխալ կը լինի սակ թէ տագնապն բոլորովին վերջացած է: Յուզումը նախ յառաջ եկաւ նախկին Հոգաբարձութեան եւ Վարդապետի միջեւ, յետոյ փոխուեցաւ ժողովուրդի եւ Հոգաբարձութեան մէջ, եւ այժմ տագնապն Վարդապետի եւ Վարդապետի մէջ է:

Երէք օր առաջ Արժ. Խաչ Վարդապետ կը գանգատէր թէ Արժ. Մաշթոյ Վարդապետ իւր Հեա Հաւասարակցի պէս չը վարուիր, թէ եպիսկոպոսականաց Եպիսկոպոսին պատուիրած է որ Եկեղեցին չ'առն իրեն, եւ այն: Պատահմամբ Մաշթոյ Վարդապետին Հանդիպեցայ, եւ ուզեցի տեղեկանալ այս մասին. նա ասաց թէ «Նկատելով որ Հին եւ նոր Հոգաբարձուներ առանձին առանձին դիմած են Եպիսկոպոսին եւ կեղեցեղ գործածութիւն խնդած են, եւ որպէս զի առանց մեզ՝ ընդհարում մը չ'ունենայ, եւ պատուիրեցի որ եւ ոչ միոյն տայ եկեղեցին, մինչեւ որ խնդիրներն կարգադրուին»: Ուզեցի գիտնալ թէ ի՞նչ էր խնդիրներու կարգադրութիւնը որ կ'ակնարկէր: Ասաց «քննիչ յանձնախումբ մը կազմուած էր, որ Հոգաբարձութեան եւ Վարդապետի մէջ տեղ եղած գծապատկան պատճառը, եւ յանցանքի որ կողմն լինելն ստուգէ. մինչեւ Հիմայ եւ ոչ մի անդեկութիւն չ'է խրկուած ինձ. կ'սպասեմ այդ տեղեկագրին, որով կը լուծուի այդ խնդիրը»: Կարող չեղայ հասկնալ թէ «Հաւասարակցի պէս» չը վարուելու» խնդիրն ի՞նչ էր:

Երկու խօսք ալ անցեալ անգամ գրածիս մասին: Արժ. Խաչ Վարդապետն իւր Հերքեցողութեամբ կ'ապացուցանէր իմ գրածը: Իմ եւ իր ասածի մէջ ի՞նչ էր տարբերութիւն: Թէ եւ Աշոտ իւր «Փոշոս» աչքերով չը տեսաւ նամակը, սակայն իւր ակնմտերով նոյն իսկ նամակագրէն լսեց պարունակութիւնը: Իսկ Կ. Յ. Փ. զուր տեղ բարկացած է: Իւր հրաժարիլն, որուն տեղեկ չ'էի, իւր ազնուութեան կը պարտինք, իսկ իւր ընտրութիւնը՝ զինք ընտրողներու անսկզբունք լինելուն: Եթէ սկզբունք է որ Բողոքական մը Լուսաւորչական եկեղեցոյ Հոգաբարձու չ'ընար ըլլալ — արդէն իրաւունք ալ չունի — ուրեմն մենք անսկզբունք կը լինինք Բողոքական մը ընտրելով:

Ազգային եկեղեցոյ Հոգաբարձուաց եւ անոնց Հեա կապ ունեցող խնդիրներու մասին բաւական գրեցի. եւ եթէ մի քանի խօսք ալ մեր Բողոքական եղբայրներու մասին չը գրեմ, պիտի խղճահարուիմ:

Հոս կան ափ մի Բողոքականներ, շատ խաղաղ: Մեր մէջ, կամ աւելի ընդհանրապէս անուշով՝ աշխարհի մէջ, ով որ իր իրաւունքներն պաշտպանէ, խոստարար եւ պատամար կը

նկատուի: Լուսաւորչականներ ապակեղբոնացում կուզեն. կը ջանան Ուսուցչի թեմակազմութենէն ելնել եւ իրենք իրենց կազմել թեմ մը. ընտրել իրենց հովիւը, եւ կատարել իրենց գործերը անկախ: Իսկ Բողոքականները կը կեղբոնանան Մր. Հիշքօքով, որ կը նշանակէ Մասաչուսէթի բոլոր քարոզիչները. կ'որոշէ անոնց ամսականները եւ կուտայ իր Հրահանգները: Իսկ ժողովուրդը միայն իրաւունք ունի եկեղեցի երթալ եւ լսել:

Պօսթոնի Համար քարոզիչ նշանակուած է Թուրքոյ Գոլէճներէն միոյն բնագիտութեան Փրօֆէսորը: Աստուածաբանութիւն եւ բնագիտութիւն, որքան մօտ առարկաներ...

Լսեցի թէ քարոզիչը ինք կ'ընտրէ, կամ ճիշդ է ասել, կը նշանակէ Հոգաբարձուներ. այս խնդրոց մէջ ալ ժողովուրդը ձայն չունի: Խնդը Բարոզիչը այս անգամ շատ նեղութիւն կը կրէ, կասն, Հոգաբարձուներ նշանակելու մէջ. որու որ կը գիտէ, մերժողական պատասխան կ'ընունի: Խօսքը մէջընդմիջ, ստիպուած է եղեր մէկի մալ ըսել «Եղբայր ինչո՞ւ չես ընդունիր, քեզի նիւթակն շահ ալ կայ մէջ», բայց այդ անձ վերջապէս մերժած է:

Ներքին Առաքելութիւնը Հայոց Համար 2,200 տոլար կուտայ, որոյ 1,200 տոլարը Մր. Հիշքօք կ'ստանայ իր թոշակ, եւ 200 ալ իւր ճանապարհածախս, իսկ մնացեալ 800 նոյն անձի ձեռամբ կը բաժնուի քարոզիչներու:

Անցեալները Ամերիկուհի մը այս թիւերն նկատելով տարեկան տեղեկագրին մէջ, կը դառնայ քովին կը ըսէ «Ի՞նչ յիմարութիւն է 1,400 տոլար ալ անձի մը որ 800 տոլար բաժնէ». եւ ալ կաւեկցուեմ, որքան աչքբացութիւն, Հայոց անուամբ մուրալ եւ Ամերիկացի մը կերակրել: Պօսթոն, Փետրով. 6. ԱՇՈՏ

ՇԻՔԱԿՈՅ, Փետրով. 8.

Տէ'ր խմբագիր Շիքակոյի Հայոց կեանքէն Հազիլուրեր կերկին թերթի մէջ. այս առթիւ ձեզ գրելու մասնաւոր լուր ունիմ, այն է ուսանողաց սկուսմբի մը գոյութիւնը եւ օգտակարութիւնը. երանի թէ ամեն քաղաք, ուր Հայեր մեծ թիւ կը կազմեն, այսպիսի խումբեր ունենան:

Ուսանողաց սկուսմբ գոյութիւն ունի երեք ամիսէ ի վեր, ուր մինչ ցարդ օգտակար նիւթերու վրայ խօսուած են, օրինակ. «Մահմադրութիւն», «Ռուսահայ», «Հայ բանաստեղծութիւն», «Ամերիկեան պատմութեան գասեր», եւ այս կիրակի ալ խօսեցաւ իրաւագիտութեան ուսանող Տիար Պ. Ա. Կեօլճիկեան, «Փարլամենթական օրէնք» նիւթ ունենալով: Ունկնդրք որոշ կը տեսնէին թէ մեր ժողովներու անկարգութիւնը, կրիւներ, մէկմէկու գլխին աթոռներ իջեցնելն՝ մեծ մասամբ արդիւնք են խորհրդարանական օրինաց ազիտութեան: Հայ երիտասարդութիւնը զարգացման այսպիսի գորաւոր միջոցներ ձեռք առնելու է:

Նոր շարժում մը կայ, Շիքակոյի եւ շրջակայից համար Վարդապետ մը ունենալ. այդ շարժում յուսանք իր գործնական եւ օգտակար արդիւնքն պիտի ունենայ: ԸՆԹԵՐՑՈՂ

ՏԻԿՆԱՆՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՆԳԷՍԸ

Փետրով. 14: Ուսթըր. Անցեալ շաբաթ երկուցի թէպէտ երկար, այլ անձանձոյթ եւ հաճելի ժամեր անցուցինք եկեղեցոյ ժողովարահին մէջ: Հանդէսը պատրաստուած էր Տիկնանց Օժանդակ Միութեան կողմէ, օգնութեամբ Գրադարանի Վարչութեան. նոր երեկոյթ մը

էր այս. Հիւրամեծար, Հիւրընկալու եւ մատակարար Հայ Տիկնանքն ու Օրիորդներն էին: Ժողովոյն ատենապետեց Պատ. Բարակեան:

Սրահը պատշաճ կերպով զարգարուած էր: Մէկ կողմը կարգաւ նշուած էին Տիկնանց Ընկերութեան անդամներն, ու միւս կողմը՝ Գրադարանի Վարչութիւնն:

Յայտագիրն բաւական ծանրաբեռնուած էր. երկու մասնաւոր ատենախօսներ հրաւիրուած էին: մին Տ. Մաշթոյ Վարդապետ, որ նախ խնդակցութիւնը յայտնեց մասնաւորապէս Տիկնանց Ընկերութեան յաջողութեանը համար՝ ցուցնելով թէ աւելի մեծ գործեր ալ կրնան տեսնել, եւ յետոյ «որպէս զի խեղճ գործաւորները չ'հրապուրուին սակէջ», ընտանիքներն հոս բերելու՝ ինչպէս հոսանքը սկսած է», սկսաւ խիստ կերպով ցուցնել հոս ընտանիք բերելու միտանքը, եւ ամփոփեց իր ըսածները ազդու քերթուածով մը, որոյ օրինակը ներփակ կ'ըստանաք:

Միւս ատենախօսն էր Պ. Խաչատուր Պէննէեան, որ իւր սովորական պերճախօսութեամբ կնոջ մայրական դերը բարձրացուց եւ գովաբանեց. իր եզրակացութիւնն, Հայ երիտասարդները յորդորեց շամուսնանալ օտարուհիներու հետ, այլ իրենց բուր գործը Հայ օրիորդներու պահել:

Տիկին Աննա Բարակեան Տիկնանց Միութեան կողմէ գոլարկի ճառով մը շնորհակալութիւններ յայտնեց: Գրադարանի Վարչութեան կողմէ ալ Պ. Պօղոս Գույումճեան ճառ մը կարդաց:

Ճառախօսներու մէջէն աչքի զարկին Տիկին Քէօնէանի եւ Օր. Գուանճեանի ազդու եւ յորդորական ճառերը: 4-5 փոքրիկ աղջիկներ սիրուն ոտանաւորներ արտասանեցին, եւ Տիկնանքն ու օրիորդներ՝ ազգային շատ մը երգեր երգեցին. աչքի զարկին մասնաւորապէս Օր. Բարակեան եւ Տիկին Սէրիճեանն որք փոփոխակի նուագեցին երգեհոնին վրայ, որոյ երգով կ'ընկերանային Տիկնայք Գազանճեան, Թովմաճանեան եւ Բարակեան:

Բարակեան փոքրիկ օրիորդներն գեղեցիկ եւ տխրանող երգեցին: Աստուգէ մին, որքի մը պէս ցնցողներ հազած լուցիկալաճառ որք աղջկան Անգլիերէն երգը երգելով... ծաղիկ վաճառեց ի նպաստ օրբոց. նոյն միջոցին լիմոնաք եւ քաղցրաստիք բաժնուեցան. նաեւ Տիկնանց Ընկերութեան կողմէ վաճառուեցան շատ մը անական ճերմակեղէններ:

Վերջապէս Տիկնանց Ընկերութիւնը ամեն ջանք չէր խնայած հրապուրիչ ընծայելու հանդէսը, որ մեծ գընահատութեան եւ շնորհակալաց արժանի է...

Տիկնանց Ընկերութիւնն իւր գըրեթէ մէկ տարուան գոյութեան մէջ անդամոց թիւը հազիւ 20ի բարձրացուցած է, մինչ Ուսթըրի մէջ կան գրեթէ 70 Հայ կիներ. բայց եւ յուսանք թէ Միութեան այս արդիւնաւոր գործունէութիւնը տեսնելով, պիտի փութան անոնք ալ մասնակցել՝ անգամ գրուելով, արհամարհելով ամեն անհասական նկատում: Ձը մոռնանք ըսելու որ հանդէսին նիւթական արդիւնքը՝ գրեթէ 15 տոլար եղաւ:

Հետեւեալ օրը (կիրակի) երկուցի Ուսուցիչ Սորոսը Ազգային լսարանի մէջ մասնաւորապէս հրաւիրուած լինելով՝ խօսեցաւ Պատ. Սանդիկեան ճիշդ մէկ ժամ, նիւթ ունենալով «Երջանիկ ըլլալ»: Վստ պերճախօսութեամբ եւ զանազանակ շեշտերով, արթուն եւ հետաքրքիր պահեց ժողովուրդը, իւր եզրակացութիւնը եղաւ «ստոյլ մարմին, ստոյլ միտք, եւ անհատական կարողութիւն, եւ բոլորին միահամուռ եւ բազմակողմանի գործութիւնը» ահա՛ երջանակութիւնը:

Բայց մի քիչ հակասական չէ՞ Հայտն այս ճգնաժամին մէջ ըլլալ... երջանիկ... * * *

ՆԱԽԱԿ ՍԹԱՄՖՐՈՅԵՆ

Փետրվ. 15, Սթամբուլ (Մեր մասնաւոր թղթակցէն)

Այս փոքր քաղաքը գալով, կը տեսնեցմ թէ տեղական փոքր ալ Հայ գաղութին մէջ ընդհանուր յուզմունք մը կայ: Ծարաթներ առաջ Տիգրիսի թղթակցներէն մէկը, չափազանցուած տեսչէ մը մղուած, շատ յուսահատական և պախարակելի վիճակի մը մէջ ներկայացուցած էր այս Հայ գաղութի կեանքը. թղթակցը կը պատմէր մեզ թէ աղբային կեանքը գրեթէ մեռած էր Սթամբուլի գաղութին մէջ. անոր անդամներու մեծ մասը թղթախաղի, այլ և այլ գուարճութիւններու մէջ թաթխուած՝ հրապարակային ժողովներ, ընդհանուր խնդիրները՝ երբէք չէին հետաքրքրելու գտնուել: Ճշմարտութեան և չոր իրողութեան սիրոյն համար, հարկ է գրեմ որ, նկարուած սեւ կեանքին մէջ չէ այս տեղի Հայ գաղութը: Ձրքալարներով հանդերձ որ ներկայ գրութեան մէջ գամուին մընան անշարժ, պէտք է ասել թէ 25-30 Հայէ բաղկացած գաղութը մտերմ կունենայ իւր գրողարան, ընթերցարանը: Տրք. Բուզոսեան և Չարմազճեան արդէն նուիրած են քանի մը կտոր գիրքեր և թերթեր: Ինչ որ մեզ նիւ Եօրքի յառաջադէմ գաղութականութեան համար երազ մըն է դեռ:

Յեղափոխական կուսակցութիւններէն Դաշնակցականները, ունին այս տեղ իրենց բաւական գործեր մասնաճիւղը. կարծեմ Չ օրինակ «Մշակ» և այլ Հայերէն. թերթեր կուզան այս տեղ: Չեմ կարծեր որ նիւ Եօրքի մէջ նոյն իսկ ամէն մէկ 200 Հայու մէկ «Մշակ» կուզայ: Փոքր գաղութիս անդամներէն մէկը նպարավաճառ է, երկու՝ պրտազավաճառ և երկու եղբայրներ ալ, գարեջրատուն ունին:

Մ Ա Ն Ի Ա Լ Ո Ւ Բ Ք

—Վաղը երեկոյ Ազատ լսարանի ժողովը տեղի չի պիտի ունենայ: —Բլծատայք երթալը, օրուան խաղերն է ինչչուէ: Տեղույն Հայերէն չորս անձինք պատրաստութիւն կը տեսնեն գարունն մեկնելու համար. և որովհետեւ ոմանք բաւական դըրամ չունին, կը ջանան փոխառութիւններ կնքել, մէկին փոխարէն 3-4 տարու պայմանու: —Մեր թղթակցին կը գրէ նէչուէէն թէ մի խումբ, պատրաստութիւններ կը տեսնէ «Վազէ»ի ներկայացումը սոյլ քիչ տեսնէն, ինպատ տեղույ գրողարանին, պայմանաւ որ եթէ փաստ խումբը իր այս ձեռնարկին մէջ, խմբակին անդամներն իրենց քովէն պիտի վճարեն այն փաստները: Վէնտամ շոգենաւը որ կ'երթի և կէր նիւ Եօրքի և Բօթրամի մէջ, Փետր. 6ին, նիւ Եօրք եկած ժամանակ ընկղմեցաւ ովկիանոսին մէջ, յատակը ծակած ըլլալուն համար: Ընկղմելէն առաջ, Սէնթ Լիւիզ շոգենաւը օգնութեան հասաւ ու 200 ճամբորդները ազատեց. այս ճամբորդներուն մէջ երկու Հայ երիտասարդներ կան եղբր: —Եարտմ եղբարք իրենց խաղի վաճառատունը փոխադրած են ի թիւ 596 Պրոտուէյ: —Ուրախութեամբ կիմանանք թէ Փարիզի մէջ կազմուած է յանձնախումբ մը Հոչակաւոր պատմագետ և Ակադէմիի անդամ Էրնէսթ Սալիմի նախագահութեան տակ, որուն նպատակն է ստակ հաւաքել ու օգնել այն Հայ ուսանողներուն, որոնց ծնողքը ջարդերէն վերջ անկարող եղած են հոգալու ուսանողական ծախքերը:

—Բաղաքիս Հայկական դեղարանը վաճառուեցաւ Հօփալտ անուն մէկին: —Վաղը Ուսթըրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ Ս. Վարդանանց տօնախմբութիւնն պիտի կատարուի: Այս առթիւ Ս. Պատարագ պիտի մատուցուի և յետոյ ժողովարանին մէջ տանախոսութիւններ պիտի ըլլան:

—Ուսթըրի Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ Այվազոսկիի Հոչակաւոր պատկերի վիճակահանութիւնը պիտի ըլլայ նոր Կիրակէին, Ապրիլ 23: Այս պատկերը, գիտեն ընթերցողք թէ նուիրուած է Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Աղբային նկարիչ Այվազոսկիի կողմէն: Վիճակահանութեան տոմսերու իւրաքանչիւրը կարծէ 50 սէնթ: Գնել փափազողները կրնան գիմել Մաշթոց Վարդապետին:

—Անցեալ Ծարաթ օր Սթամբուլի մէջ Իսլամաւոր մը վիրաւորեց Իսալայի մը Գէորգ եղբարց գինետան մէջ. վիրաւորեալն վերջէն գինետան առջեւ դաշոյնով սպաննեց Իսլամաւորին: Գէորգ եղբարք և Համբարձումանուն Հայ մի վկայութեան կանչուած են:

—Պ. Ասլան Սահակեան, Եօնքրօի ծանօթ վաճառականը, որ բաւական աստիճան էր օգտփոխութեան համար, կը լսենք թէ ընդարձակ ազարակ մը պիտի գնէ Լօս Անձէլօսի մօտ:

—Վաղը Բալվըրի մասրան մէջ Պատ. Յակոբեան պիտի քարոզէ նիւթ ունենալով «տակաւին Աստուծոյ եկեղեցին սուգի մէջ է» Ետտ. ԺԱ. 8:

—Տրք. Այվազեան և Տ. Թավջանճեան անդամ ընտրուած են Բարեգործական ընկերութեան ղեկանին:

—Բարե շորձական Ընկերութեան վարչութիւնն արտօնած է իր Գանձապետն մինչև 10 տարւ օգնութիւն տալ կարօտեալի մը, եթէ այս վերջին վարչութիւն անդամներու երկուքէն ստորագրուած վկայական մը ունենայ: Տաւը տարբէ ասելի օգնութիւն մը տալու համար, վարչութեան մասնաւոր հրահանգ ստանալու է Գանձապետը:

—Ըսթամբուլի մէջ, ամառոյ 6ին գիշերը Պ. Կ. Սարգիսեանի խանութը գողեր մտնելով, քանի մը սնտուկ սիկար տարած են. տեղական ոստիկանութիւնը գողերը փնտռելու ետեւ է:

ՓՈՒՆՁԸ ՈՒ ԿՈՅՈՒՄ

Չուարթ օր մը գարնանային, գովազդին Արշալուսին ևս դաշտ իջայ ցաւազին Ալեքսանտր յուզմանց մրրիկ զիս վարէր Հողմատատան չոր ճիւղին պէս տարուեր: Վայր ու վեր: Կապոյտ երկինք պարզ ու վճիտ կը փայլէր: Լեռ ու հովիտ մայրի թարմ հոտ բուրբեր: Բնութիւնը նոր աշխուժիւ ոգևոր Գոգցես ցնձմամբ կ'ողջագուրէր այս քաղցր օր: Բառաւոր: Վարդենաց խիտ թփոց մէջէն, շատ մեղմիկ երգի մը ձայն զիս հրապուրէր՝ հանգարտիկ. «Սոխակ մ'է այն», ըսի «կ'երգէ ետանդուն Իրօրատենչ երազներով ժիր արթուն: ու փայտուն»:

Եւ գնացի դէպ ի ձայնը շտապով, Տեսնելու զայն, այգուն սիրոյ կրակով Ո՞վ դաշտ իջած լուսութիւնը խանգարէր ի՞ առաւօտեան՝ թունցեց և աւազ խանդ մարէր, կարեվէր:

Անկունէ մը վարդի թուփոց բացուածքին ներս ձգեցի սուր նայուածք մը կաթոլին

Տեսայ կանգնած Հայ պաշտելի երգչուհին Որ՝ կը կապէր ծաղկանց փունջ մը խնդազին: Խիստ անգին: Փանգոյրներուն մէջէն ցիրցան ոսկի թել կտրեց և կապ մ'ըրաւ փունջին անարգել Ձայն պիտ ձօնէր իր պաշտելոյն ինուէր Որուն համար նէ, կ'երեւի, կը վառէր կը մաշէր: ՏԻՐԱՆ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

(Շար. առաջին երեսէն) Երկրորդ անգամ Փարիզի Գողգոթաի՝ Մօնթմարթըրի վրայ կը խաչեն: Թողովուրդ մը որ վարքը չի մտածեր, այլ իր զգացմանց յուզմանց կը հնազանդի, անոր Չօլան շնորհակալ ըլլալու է եթէ դատաւարտուի, որով հետեւ հանրային գրգռումը այն աստիճանի է իրեն դէմ, որ Գաղիոյ մէջ բանտէն դատ ուրիշ ապահով տեղ մնացած չէ իրեն համար:

Մէյն զրահանաւի պայթուցի ամպերով ծածկած է Միացեալ Նահանգաց Բաղադական հորիզոնն: Կը կարծուի թէ Սպանիական թ օր փէտ օր մը գործն է Մէյնի սոսկալի արկածը: Տեղական Մամուլը պատերազմի կը պատրաստուի: Եթէ մամուլը ձեռք մընար այս խնդիրն, հիմայ վառօդի հոտը հոս հասած կ'ըլլար արդէն: Մ. Ն. Կեղերնական կառավարութեան կողմէ Եանձնախումբ մը կազմուեցաւ, արկածին պատճառը գտնելու պաշտօնով: Եթէ կարծուածին պէս հաստատուի թէ Սպանիացիք օդը հանած են Ամերիկեան գրահանաւն, քիչ ատենէն ամպերը կը պայթին ի հարկէ:

Ճըրզի մէջ Եկեղեցի մը շինելու խնդրոյն ի նպատակ ընդունած ենք 40ի չափ նամակներ. ի հարկէ ասելուրդ և անկարելի է ասոնք հրատարակել: Գալով թուով պիտի ջանանք քաղաքներ ընել այս թղթակցութիւններէն ու գլխաւոր փաստերն միայն հրատարակելով փակել վիճարանութիւնն:

ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

ԻՄ ՍԻՐԱՅՍ Իմ սիրածս Հայերնիքս է, Հայաստան, Հայոց լեզուն՝ Հայ ազգութեան պատան, Իմ սիրածս Հայ կրօնն է, մեր հայրեր Որուն տուն իրենց արեան կաթիլներ: Իմ սիրածս Հայն է, Հայու զաւակներ Հոգ չէ ինիս աղքատ, տնանի ու անտէր Իմ սիրածս Հայ անունն է, Հոգ չէ իսկ Ձայն նախատեն բոլոր ազգերու աղիւք Իմ սիրածս Հայ որբերն են, այս օրեր Որոց համար քիչ կը խորհինք, անտարբեր: Իմ սիրածս այն Հայերն են, որ ջանան փրկել զանոնք, փրկել Հայոց ապագան: ՔԵՐԹՈՂ

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ս Ռ

Պատու ունիմք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ վերջին ժամու, Մըսքիի և Թուրքիոյ ամեն տեսակ ապրանքներ, զօրօրինակ պուլ-դուր, ծեծած, լոխուս, հալվա, խահ-վէի տէյրման և ճէզվէ, ներկիլէ, թէմպէթի, Հայոց ազգային հիւանդանոցի սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ նպարներ ու անուշեղէններ. որ չենք կրնար բոլորն ալ յիշել հոս: Նաև ունինք ամեն տեսակ պահարկ-ղէններ: Խիստ աժան դիւնր: Փորձեցցէք ԱՊՈՒ ՆԱՍՐԻ 73, Ուաշինգթօն Փոռոլ:

ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ ԵՒ ԲՈՂՈՂԱԿԱՆ ՆՕՐԱՅՈՎ

Հինգ վեց տարիներէ իվեր Ամերիկայի և Արտասահմանի Հայեր մեծ եռանդով սկսած են հետամտիլ Հայկական երգերու և երաժշտութեան, խնդրած են մեզմէ Ազգային Երգեր ձայնագրել և շրկել իրենց հասցէին որ յեղիպտոս, Կիպրոս, Մարսել, և կամ Ամերիկայի այլ քաղաքները: մէն մի եղանակի 25-50 սէնթ վճարելով (ըստ երկայնութեան եղանակի):

Յոյժ զգալի տեսնելով ուր մնայ այս պէտքն ու պահանջն, և շատ մը բարեկամներու խնդրքն շմերժելով՝ կուզամք այս առթիւ ծանուցանել Հայ մարմնոյն որ յիմերիկա և այլուր թէ մի ամփոփ ազգային երգարան՝ նօթաներով հանդերձ պիտի պատրաստենք տարւոյս մի քանի ամսոց մէջ, յորում պիտի գտնուին 80ի չափ պին ու նոր ընտիր երգեր, ձայնագրեալ մէկ և աւելի եղանակներով: Ամեն անոնք որ այժմէն կը յըզեն իրենց բաժանորդագրին, մէկ տարւ միայն պիտի վճարեն և ստանան ընկալագիր:

Երգարանը լոյս տեսնելէն վերջ, գրնը պիտի ըլլայ § 1.50:

Յ. Սարգիսեան, 289 Տին Սըրիդ, Փրովիտէնս, Բ. Ա.

Ե Ղ Բ Ո Ւ Ք Ա Ք Ր Ա Ն Ա Մ Ե Ա Ն

Թիւ 24 Պէք Սթրիթ, Փրովիտէնս, Բ. Ա. Փրովիտէնսի մէջ վերջերս հաստատուած ենք Արեւելեան Օղիթի, Մասթիքայի գործարան մը: մեծ խնամքով կը պատրաստենք յիշեալ ըմպելիները:

Կուզանք խնդրելու ամեն Հայէ, որ եթէ ըմպելի գործածել ուզեն փոխանակ օտար և անախորժ ըմպելիներ գործածելու, և իմեն մեզ և ըստանան իրենց վարձուած գումար շամիչէ մաքուր օղի, իւր տեսակներով: Նաև եթէ փափաքին իր Արեւելեան ըմպելի նուէր տալու բարեկամներու, ստոր համար պատրաստած ենք ազուր ներմուծեալ փաթթոյններով և կնիքներով փակուած շիշէներ, իրիտ պատուական տեսակէն. կրնաք այս շիշէներն գնել և պէտք եղած տեղերն շրկել:

Կը յայտարարենք նաև թէ Ուաշինգթօնէն մեզ արուած է փաթէնթ, ուստի կ'զգուշացնենք ուրիշ ծախողները: Գիներ. \$3.00 1 կալըն. 90 Փրուք \$4.00 ,, ,, 100 ,,

Ճ Ի Ի Լ Ի Բ Ա Չ Ե Յ Ն

Վ.Ա.ՃԱՌԱԿԱՆ Մխախտի, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու Թիւ 592 Յրդ Ալլիւի

Յ Ի Շ Ե Գ Ե Տ Ի Գ Ի Թ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ Խ Ա Չ Ա Տ Ո Ւ Բ Կ Ա Ր Վ Ա Ն Ե Ա Ն 388 Յրդ. Ալլիւի նիւ Եօրք

Շ Ա Տ Ա Ն Հ Ա Ր Ի Ի Ն Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ Ե Բ

Շահուն Հարիւրին երեքը պիտի յատկանայ Հայաստանի Որբերուն: Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, Ա. Ռ. Ա. Չ. Ա. Կ. Ա. Բ. Գ. Դ. Ե. Բ. Չ. Ա. Կ. Թիւ 628 Յրդ Ալլիւի, նիւ Եօրք:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Ե Ի Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն

Ընտիր կերպասեղէններէ վայելուչ հաղուստներ կը շինէ դիւրամատչելի գիներով: